ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.7-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. մարտի 10-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի փետրվարի 11-ին կայացած նիստի N2/2.7-25 արձանագրությամբ՝ «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությանը՝ «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծրագրով ներկայացված գործողությունները իրականացվելու են ոչ թե 10, այլ 9 ամսվա ընթացքում, մրցութային Հանձնաժողովի կողմից առաջարկվել էր Ծրագրի ֆինանսական նախահաշվով նախատեսված աշխատավարձի չափը՝ 6 580 000 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ գումարը կրճատել, իսկ կրճատված գումարի մի մասը վերաբաշխել հայտի ֆինանսական նախահաշվի ծրագրային ծախսեր հատվածի 2.8 կետին՝ կարծիքի առաջատար (ինֆլյուենսեր) հոդվածին: Միաժամանակ, հաշվի առնելով վերոգրյալը, դրամաշնորհի վերջնական գումարը ևս շտկել: «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակը (առկա է էլեկտրոնային տարբերակը):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.7 կետով նախատեսված **«Թվային և սոցիալական հարթակների վարում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

- **«ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի** հետ՝ 30,013,440.0 (երեսուն միլիոն տասներեք հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամի (այդ թվում՝ 5,002,240.0 (հինգ միլիոն երկու հազար երկու հարյուր քառասուն) ՀՀ դրամ ԱԱՀ) չափով:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____